ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՔՈԼԵՋ

ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Սուսաննա Արտաշեսի Կիրակոսյան

«Գործարար էթիկա. տարբեր երկրներում գործարար էթիկայի մշակութային տարբերությունները»

Մասնագիտությունը՝

«Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»

Ղեկավար ՝ Անահիտ Մելքոնյան

ԵՐԵՎԱՆ 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ……..3
ԳԼՈՒԽ I: ԷԹԻԿԱՆ ՈՐՊԵՍ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԲԱԺԻՆ 5
1.1.Մետաէթիկա……...……7
1.2.Նորմատիվ
էթիկա…….8
1.3.Կիրառական էթիկա……..9
ԳԼՈՒԽ II: ԲԻԶՆԵՍ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱՆ ԵՎ ՆՐԱ ԴՐՍԵՎՈՒՄՆԵՐԸ ՕՏԱՐ
ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ……..12
2.1 Գործարար արարողակարգի առանձնահատկությունները տարբեր
երկրներում……18
2.2 Գործարար և պաշտոնական այցեր,
ընդունելություններ……22
Հավելվածից: ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ……...28
Եզրակացություն……...29
Օգտագործված գրականության
ցանկ……31

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքը նվիրված է գործարար էթիկային և առհասարակ էթիկայի միջմշակութային դրսևորման ուսումնասիրությանը:

Աշխատանքի թեման է. «**Գործարար էթիկա. տարբեր երկրներում գործարար էթիկայի մշակութային տարբերությունները**»:

Թեման խիստ **արդիական** է, քանի որ անկախ մարդկանց կրթված և զարգացած լինելուց, այնուամենայնիվ էթիկայի հիմունքները գտնվում են մարդկանց ուշադրության կենտրոնում, և արդյունավետ գործարար հարաբերութուններ հաստատելու համար անհրաժեշտ է տարբեր ժողովուրդների էթնոմշակութային առանձնահատկությունների և գործարար էթիկայի իմացության:

Մեր աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել էթիկան որպես վարվեցողության ուսմունք՝ հիմք ընդունելով նրա դերը ժամանակակից գործարար հարաբերություններում:

Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Բոլոր ժամանակաշրջաններում էթնոմշակութային առանձնահատկությունները իրենց կնիքն են դրել վարվեցողության նորմերի ձևավորման և կիրառման ձևերի վրա, որի հետևանքով շատ պետություններ առաջնորդվել են վարվեցողության որոշ կանոններով, որոնք խստորեն պահպանվում են որոշ երկրներում, մինչդեռ նույն նորմերի պահպանմանը այլ երկրներում առանձնահատուկ ուշադրություն չի դարձվում:

Քաղաքավարության կանոններին հետևելը նպաստում է այլ մարդկանց հետ բարեկամական ու ներդաշնակ փոխհարաբերությունների հաստատմանը, թույլ է տալիս պահպանել սեփական արժանապատվությունն ու շրջապատի հանդեպ հարգանքը անգամ ամենաբարդ կոնֆլիկտային իրավիճակներում, բարձրացնում է մարդու վարկն ու հեղինակությունը:

Էթիկան փիլիսոփայական ուսմունք է բարոյականության էության, նրա կառուցվածքի, զարգացման, գործառնությունների, օրենքների և հասարակության մեջ նրա ունեցած դերի մասին: Կարելի է ասել, որ էթիկան անձի բարոյական վարքի չափորոշիչ համակարգն է: Էթիկա տերմինը երբեմն օգտագործվում է նաև որոշակի սոցիալական խմբի բարոյական և բարոյագիտական նորմերի համակարգի նշանակման համար:

Էթիկայի հիմնական խնդիրներն են բարու և չարի չափանիշների հիմնախնդիրը, կյանքի իմաստի և մարդու նշանակության խնդիրը, արդարության հիմնախնդիրը, պատշաճության հիմնախնդիրը:

Էթիկական արժեքների դասակարգումը հիմնվում է հետևյալ արժեքների վրա

- Մարդկային գլխավոր արժեքները, որոնք ավելի կամ պակաս չափով մտնում են բոլոր հնացած էթիկական արժեքների մեջ (կյանքի, գիտակցության, գործունեության, տառապանքի, ուժի, կամքի ազատության, կանխատեսման, նպատակաուղղվածության արժեքը),
- Առաքինությունները (արդարություն, իմաստություն, քաջություն, ինքնատիրապետում, սերը մերձավորի նկատմամբ, ճշմարտացիություն և անկեղծություն, հավատարմություն և նվիրվածություն, բարություն և կարեկցանք, վստահություն և հավատ, համեստություն և հնազանդություն, ուրիշների նկատմամբ վերաբերմունք),
- Ավելի մասնավոր էթիկական արժեքները (սերը ամենահեռավորի նկատմամբ, սեփական հոգևոր հարստությունը, ուրիշներին նվիրելու կարողությունը, անհատականության արժեքը, դեպի ուրիշի անհատականության իդեալական արժեքն ուղղված սերը):

ԳԼՈՒԽ I: ԷԹԻԿԱՆ ՈՐՊԵՍ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԲԱԺԻՆ

Էթիկան կամ բարոյագիտությունը փիլիսոփայության բաժին է, որը զբաղվում է վարքագծի ճիշտ և սխալ հասկացությունների համակարգմամբ, պաշտպանությամբ և ներկայացմամբ: **Էթիկա** տերմինը առաջացել է հին հունարեն ἠθικός (էթիկոս), ἦθος (էթոս) բառից, որը նշանակում է սովորություն: Էթիկան որպես գիտություն էսթետիկայի հետ միասին զբաղվում է արժեքների խնդիրներով, ուստի կազմում է փիլիսոփայության արժեքաբանություն ճյուղը:

Էթիկան հետազոտում է մարդկային բարոյականության հետ կապված խնդիրները, այսինքն՝ բարու և չարի, ճշտի և սխալի, առաքինության և արատի, արդարության և հանցանքի խնդիրները: Բարոյագիտությունը՝ որպես ինտելկտուալ ուսումնասիրության ոլորտ, նույնպես կապված է բարոյահոգեբանության, նկարագրային էթիկայի և արժեքի տեսության հետ:

Այսօր կա էթիկայի ուսումնասիրության երեք գլխավոր բաժին՝

- Մետաէթիկան զբաղվում է բարոյական հիմնավորումների տեսական նշանակությամբ և ծանոթագրություններով, և թե ինչպես կարող են դրանց ճշմարտության արժեքները հաստատվել:
- Նորմատիվ էթիկան զբաղվում է բարոյական վարվելակերպի պրակտիկ իմաստների ուսումնահիրությամբ:
- Կիրառական էթիկան, որը զբաղվում է այն հարցերով՝ թե մարդը ինչ պետք է անի կոնկրետ իրավիճակում կամ հատուկ գործողությունների տիրույթում:

Ռաշվորթ Քիդերը պնդում էր, որ էթիկայի ստնադարտ բնորոշումը սովորաբար իր մեջ է ներառում այնպիսի ձևակերպումներ, ինչպիսին են օրինակ՝ «մարդկային իդեալական բնավորության ուսումնասիրություն» և «բարոյական պարտքի ուսումնասիրություն»:

Ռիչարդ Ուիլյամ Փոլը և Լինդա Էլդերը բնորոշում են էթիկան, որպես հասկացությունների ու սկզբունքների շարք, որը օգնում է մեզ հասկանալ, թե որ պահելաձևն է օգնում կամ վնասում բանական արարածներին: Ըստ Քեմբրիջի փիլիսոփայության բառարանի էթիկա բառը փոխիմաստաբար օգտագործվում

է բարոյականություն բառի հետ և երբեմն էլ այն օգտագործվում է ավելի նեղ իմաստով՝ նկատի ունենալով ինչ-որ մի ավանդույթի, խմբի կամ անհատականության բարոյական սկզբունքները[1]: Փոլը և Էլդերը պնդում են, որ մարդկանց մեծ մասը շփոթում է էթիկան այն պահելաձևի հետ, որը ըստ հասարակական պահանջների, կրոնական հավատքի և օրենքի պահանջների է ձևակերպված և չեն վերաբերվում էթիկային որպես առանձին հասկացության:

Անգլերենում «էթիկա» բառը մի քանի իմաստ ունի[2]: Այն կարող է վերաբերել փիլիսոփայական էթիկային, ինչպես նաև բարոյագիտությանը՝ բնագավառ, որն օգտագործում է բանականությունը էթիկային վերաբերող տարբեր տեսակի հարցերին պատասխանելու համար: Անգլիացի փիլիսոփա Բերնարդ Ուիլյամսը, փորձելով բացատրել բարոյագիտություն տերմինը, ասում է՝ «Այն, ինչը հետազոտությունը դարձնում է փիլիսոփայական, դա անդրադարձող համընդհանրությունն է և փաստարկի այն ոճը, որը ռացիոնալորեն համոզիչ է»:

Ուիլյամսն այս ոլորտի հարցաքննումը համարում է բավականին մեծ հասկացություն՝ «թե ինչպես մարդը պետք է ապրի»: Էթիկան կարող է նաև վերաբերել էթիկական խնդիրների մասին հասարակ մտածելու ունակությանը, որը առանձնահատուկ բան չէ փիլիսոփայության համար: Ինչպես ասել է բիոէթիկոս Լարի Չերչիլը, «Էթիկան, որը ընկալվում է որպես բարոյական արժեքների մասին քննադատորեն մտածելու կարողություն և առաջնորդում է մեր քայլերը այդպիսի արժեքների շրջանակներում, մարդկային ընդհանուր հատկանշական կարողություն է»: Էթիկան կարող է նաև օգտագործվել՝ նկարագրելու ինչ-որ մի կոնկրետ մարդու սեփական ինքնահատկանշական սկզբունքեր կամ սովորություններ: Օրինակ՝ «Արամը տարօրինակ էթիկա ունի»:

«Էթիկա» բառը առաջացել է հին հունարեն *êthikos* բառից, որը նշանակում է «ինչ-որ մեկի բնույթին վերաբերող»: Հին հունարեն *êthikos* բառը նույնպես առաջացել է մեկ այլ հունական բառից՝ *êthos*, որն էլ նշանակում է «բնավորություն, խառնվածք»[3]:

---

[1] John Deigh in Robert Audi (ed), The Cambridge Dictionary of Philosophy, 1995.

[2] Definition of ethic by Merriam Webster". Merriam Webster. Retrieved October 4, 2015.

[3] An Intermediate Greek-English Lexicon. 1889.

1.1 Մետաէթիկա

Մետաէթիկան փիլիսոփայական էթիկայի մի ճյուղ է, որն առնչվում է այն հարցերին, թե ինչպես ենք մենք հասկանում, ինչ գիտենք և ինչ նկատի ունենք՝ ինչ-որ մի բանի ճիշտ կամ սխալ լինելու մասին խոսելիս[4]: Այն էթիկական հարցը, որը վերաբերում է կոնկրետ պրակտիկ իրավիճակի, ինչպես օրինակ՝ «Արդյո՞ք ուտեմ շոկոլադե տորթի այս կտորը» չի կարող լինել մետաէթիկական հարց (ավելի շատ կիրառական մետաէթիկայի հարցերից է): Մետաէթիկական հարցը վերացական է և վերաբերում է ավելի կոնկրետ պրակտիկ հարցերի լայն շրջանակի: Օրինակի համար «Արդյո՞ք երբևէ հնարավոր կլինի ունենալ հստակ տեղեկություն, թե ինչն է սխալ և ինչն է ճիշտ» մետաէթիկական հարց է:

Մետաէթիկան միշտ զուգորդվել է փիլիսոփայական էթիկային: Օրինակ՝ Արիստոտելը ենթադրում էր, որ էթիկայի բնագավառում կարող է լինել ավելի քիչ հստակությամբ ինֆորմացիա, քան այլ ուսումնասիրության բնագավառներում և նա դիտարկում էր էթիկայի մասին գիտելիքը որպես սովորույթից կամ մշակույթից կախում ունեցող այնպիսի գիտելիք, որը տարբերում է էթիկան ուրիշ տեսակի գիտություններից: Մետաէթիկան կարևորեցվում է նաև 1903 թվականի Ջորջ Էդուարդ Մուրի «*Principia Ethica*» գրքում, որտեղ Մուրը գրում է իր առաջ դրած տեսության՝ բնական սխալի մասին (Մուրը պնդում էր, որ կեղծ կլիներ բացատրել, թե որն է վերացականորեն համարվում «լավ» բնական բնազդների հաճելիի և ցանկալիի շրջանակներում): Մուրը իր «Բաց հարցադրման փաստարկը» տեսության մեջ ժխտում էր նատուրալիզմը էթիկայում: Սա ստիպեց մտավորականներին ևս մեկ անգամ վերանայել էթիկայի երկրորդական հարցերը: Ավելի վաղ շոտլանդացի փիլիսոփա Դեյվիդ Հյումը առաջադրել էր նմանատիպ տեսակետ փաստերի և արժեքների միջև տարբերության մասին:

Էթիկայում ուսումասիրությունները մեր ճանաչողական գիտելիքների մասին բաժանվում են ճանաչողականի և ոչ ճանաչողականի, ինչը բավականին նման է բնորոշող և ոչ բնորոշող հատկությանը: Ոչ Ճանաչողականն այն տեսակետն է, որ երբ մենք դատում ենք բարոյական տեսակետից ճիշտը և սխալը, սա ո՛չ ճիշտ է, ո՛չ սխալ: Մենք միգուցե արտահայտում ենք միայն մեր էմոցիոնալ զգացումները

[4] https://web.archive.org/web/20131028131348/http://www.bbc.co.uk/ethics/introduction/intro_1.shtml

տվյալ հատկությունների վերաբերյալ[5]: Ճանաչողականը կարող է դիտարկվել որպես պնդում, որ երբ մենք խոսում ենք ճշտի և սխալի մասին, մենք խոսում ենք փաստի խնդրի մասին:

1.2 Նորմատիվ էթիկա

Նորմատիվ էթիկան բարոյական վարվելակերպի ուսումնասիրությունն է: Սա էթիկայի բաժին է, որը ուսումնասիրում է այն հարցերի խումբը, որոնք առաջանում են, երբ ենթադրում ենք, թե ինչպես մարդը իրեն պետք է բարոյապես դրսևորի: Նորմատիվ էթիկան շատ է տարբերվում մետաէթիկայից, քանի որ նորմատիվ էթիկան քննում է գործողությունների ճիշտ և սխալ լինելը, մինչդեռ մետաէթիկան ուսումնասիրում է բաոյագիտական լեզուն և բարոյագիտական փաստերի վերացական լինելը: Նորմատիվ էթիկան տարբերվում է նաև նկարագրային էթիկայից, քանի որ վերջինս մարդկանց բարոյագիտական սկզբունքների էմպիրիստական ուսումնասիրությունն է: Այլ կերպ ասած՝ նկարագրային էթիկան ավելի շատ կզբաղվեր այն հարցով, թե մարդկանց ինչքան մասն է կարծում, որ սպանությունը միշտ սխալ է, մինչ նորմատիվ էթիկան կզբաղվեր այն հարցով, թե արդյոք ընդհարապես ճիշտ է ունենալ նման համոզմունք: Ուստի նորմատիվ էթիկան երբեմն կոչվում է նախագրային, ոչ թե նկարագրային: Այնուամենայնիվ, ըստ բարոյագիտական ռեալիզմ տեսակետի բարոյագիտական փաստերը միաժամանակ և՛ նկարագրային են, և՛ նախագրային:

Ավանդականորեն նորմատիվ էթիկան (նաև հայտնի որպես բարոյագիտական էթիկա) ուսումասիրում էր, թե ինչն է դարձնում գործողությունները ճիշտ և սխալ: Այս տեսությունները առաջարկում էին համամարդկային բարոյական սկզբունքներ, որոնք մարդիկ կարող էին օգտագործել բարոյական բարդ որոշումներ կատարելիս:

20-րդ դարի սկզբին բարոյագիտական տեսությունները դարձան ավելի բարդ և չէին դիտարկվում միայն ճշմարիտ կամ սխալ լինելու տեսակետից, այլ տարբեր բարոյական տեսակետներից: 20-րդ դարի կեսերին նորմատիվ էթիկայի ուսումնասիրությունները նվազեցին, քանի որ մետաէթիկան դարձավ ավելի պահանջված: Մետաէթիկայի վրա նման կենտրոնացումը հանգեցրեց նրան, որ

[5] http://www.iep.utm.edu/non-cogn/

լեզվաբանները կենտրոնացան վերլուծական փիլիսոփայության վրա և սկսեց տարածվել տրամաբանական պոզիտիվիզմը:

1.3 Կիրառական էթիկա

Կիրառական էթիկան փիլիսոփայության ճյուղ է, որը ձգտում է կիրառել էթիկայի տեսությունները իրական կյանում: Այս ճյուղը ունի բազմաթիվ մասնագիտացված ոլորտներ, ինչպես օրինակ՝ ինժեներական էթիկա, բիոէթիկա, գեոէթիկա, հանրային ծառայությունների էթիկա, բիզնես էթիկա և այլն:

Մինչ անցումը մեր բուն թեմային, մի փոքր անդրադարձ կատարենք կիրառական էթիկայի մյուս ճյուղերից մի քանիսին ևս:

Բիոէթիկան հակասական էթիկայի ուսումնասիրությունն է, որն առաջացել է կենսաբանության և բժշկության զարգացումով: Բիոէթիկները զբաղվում են կենսաբանական գիտությունների, բիոտեխնիկայի, բժշկության, քաղաքականության, իրավիագիտության և փիլիսփայության կապերի մեջ առաջացած էթիկական հարցերով: Այն նաև իր մեջ ներառում է արժեքների վերաբերյալ հաճախ հանդիպող հարցեր, որոնք առաջանում են առաջնային խնամքում և բժշկության տարբեր ճյուղերում:

Մեքենայական էթիկայում առկա խնդիրները առաջընթաց կստեղծեն մարդկանց էթիկան հասկանալու գործընթացի մեջ՝ ստիպելով մեզ լրացնել բացթողումները ժամանակակից օրինաչափական տեսություններում և ստեղծելով հարթակ փորձարկային հետոզոտությունների համար:

Ձանքը, որը պահանջվում է մեքենա կամ արհեստական սարք ծրագրելու համար, որպեսզի այն ունենա բարոյական գիտակցություն, պահանջում է նոր դասակարգում մեր օրինաչափական տեսություններում, սա հատկապես վերաբերվում է այն ասպեկտներին, որոնք դիտարկվում են որպես առողջ բանականություն: Օրինակ՝ մեքենաները, ի տարբերության մարդկանց, կարող են հիշել բազմաթիվ ալգորիթմներ և այս գործառույթների էթիկական արժեքների վերաբերյալ հակասություններ առաջացան: Սա միգուցե վերաբացի նոր տերմիններով օրինաչափական էթիկա կազմելու վերաբերյալ բանավեճերը:

Ռազմական էթիկան զբաղվում է ուժի գործադրման և զինվորի վարքի հարցերով և հաճախ համարվում է, որպես կիրառական մասնագիտական էթիկա:

Արդար պատերազմի տեսությունը սովորաբար դիտարկվում է որպես ռազմական էթիկայի հիմք: Այնուամենայնիվ, առանձին պետություններն ունեն կենտրոնացման տարբեր ոլորտներ:

Քաղաքական էթիկան, հայտնի է նաև քաղաքական բարոյականություն կամ հանրային էթիկա, քաղաքական գործողությունների և գործիչների մասին բարոյական դիտարկումների պրակտիկա է:

Հանրային ոլորտի էթիկան սկզբունքների շարք է, որն առաջնորդում է պետական պաշտոնյաներին իրենց սատարողներին ծառայելու գործում, առաջնորդում է նրանց նաև իրենց սատարողների կարծիքների վրա հիմնվելով որոշումներ կայացնել: Հանրային էթիկայի հիմքում ընկած գաղափարն այն է, որ որոշումները կայացվում են հօգուտ հանրության, այլ ոչ թե պետական պաշտոնյաի անձնական շահերի կամ ինքնածառայողական քաղաքական շահերի:

Հրապարակային էթիկան կանոնների շարք է, որն օգտագործվում է գրելու և հրատարակելու գործընթացում բոլոր պրոֆեսիոնալ հրապարակումների համար: Հետևելով այս կանոններին՝ հեղինակները պետք է հաստատեն, որ հրապարակումները չեն պարունակում գրագողություն կամ կողմնապահություն: Որպես խարդախության կանխարգելման միջոց, այս սկզբունքները կարող են կիրառվել նաև փորձերի համար, որոնք վերլուծվում են հրատարակություններում՝ ապահովելով տվյալների ճշգրիտ և անաչառ ներմուծումը:[6]

Հարաբերական էթիկան կապված է խնամքի էթիկայի հետ: Դրանք օգտագործվում են քանակական, հատկապես ազգագրության մասին հետազոտություններում: Այն հետազոտողները, որոնք օգտագործում են հարաբերությունների էթիկան, արժեվորում և հարգում են իրենց և իրենց կողմից ուսումնասիրվող մարդկանց միջև հարաբերությունները և այն կապերը, որոնք առկա են հետազոտողների և այն համայնքների միջև, որտեղ իրենք ապրում են և աշխատում[7]: Այս էթիկան նաև օգնում է հետազոտողներին լուծել դժվարին հարցեր մահացած մարդկանց մասին հետազոտությունների ժամանակ և բարեկամանալ հետազոտությունների մեջ մասնակցող մասնակիցների հետ: Անձնական

[6] https://onlinelibrary.wiley.com/doi/full/10.1111/j.1460-9592.2009.03086.x
[7] https://journals.sagepub.com/doi/10.1177/1077800406294947

հարաբերություններում հարաբերական էթիկան ձևավորում է կառուցվածքային թերապիայի հայեցակարգը:

Բիզնես էթիկան (գործարար էթիկան) կիրառական կամ մասնագիտական էթիկայի ձև է, որն ուսումասիրում է էթիկական սկզբունքները և էթիկական կամ բարոյական խնդիրները, որոնք կարող են առաջանալ են գործնական միջավայրում: Այն ներառում է այնպիսի ոլորտներ, ինչպիսն է օրինակ բժշկական էթիկան: Բիզնես էթիկան ներկայացնում է այնպիսի դրսևորումներ, որոնք ցանկացած անհատ կամ մարդկանց խումբ կատարվում է կազմակերպության ներսում և որոնք կարող են բացասականորեն կամ դրականորեն ազդել բիզնեսի հիմքային արժեքների վրա: Այն կիրառվում է բիզնեսի բոլոր ասպեկտներում և կարևոր է անհատների և ամբողջ կազմակերպության համար:

Բիզնես էթիկան ունի և՛ օրինաչափական, և՛ նկարագրողական չափումներ: Որպես կորպորատիվ փորձառություն և կարիերայի մասնագիտացում, ոլորտը հիմնականում օրինաչափական է: Ակադեմիաները, որոնք փորձում են հասկանալ գործնական վարվելակերպը օգտագործում են նկարագրողական մեթոդներ: Հետաքրքրությունը դեպի բիզնես էթիկա զարգացավ 1980-90ական թվականներին և ընկերություններում և ակադեմիաներում: Օրինակ՝ այսօր շատ ընկերություններ օժանդակում են տնտեսապես արժեք չունեցող այնպիսի ստորաբաժանումների, ինչպիսք են էթիկայի սկզբունքները և սոցիալական պատասխանտվության կանոները: Ադամ Սմիթը ասել է՝ «Թեև նույն բիզնես ոլորտի մարդիկ հազվադեպ են հանդիպում իրար, անգամ ուրախության և զվարճության համար, բայց իրենց միջև երկխոսությունը ավարտվում է հանրության հանդեպ դավադրությամբ կամ գները բարձրացնելու հնարամտությամբ»: Կառավարությունը օգտագործում է օրենքները և կարգավորումները՝ ցույց տալու գործնական վարքագիծը այն ոլորտներում, որտեղ դրանք համարվում են արդյուանվետ: Էթիկայի ներգրավածությունը կանոնակարգում է վարքի այն ոլորտները, որոնք դուրս են կառավարության հսկումից:

Խոշոր ընկերությունների հայտնվելը սահանափակ կապերով և հասարակության հանդեպ հոգատարությամբ, որի հետ նրանք աշխատում են, խթանեց ֆորմալ էթիկայի ռեժիմների զարգացմանը :

ԳԼՈՒԽ II: ԲԻԶՆԵՍ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱՆ ԵՎ ՆՐԱ ԴՐՍԵՎՈՒՄՆԵՐԸ ՕՏԱՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ

Բիզնեսի և գործարար հանդիպումների էթիկան իրենից ներկայացնում է կանոնների համախումբ, որոնք հիմնված են մարդկային ավանդական արժեքների վրա և որոնց հետևում են կազմակերպության անդամներն ու գործընկեր կազմակերպությունները:

Ավանդաբար գործարար էթիկան հիմնվում է ընկերության աշխատակիցների, նրա հաճախորդների և գործընկերների շահերը հարգելու և հաշվի առնելու վրա: Այն տարածվում է նաև մրցակիցների վրա և ենթադրում է բիզնես պայքարում արգելված կամ անարդար մոտեցումների կիրառության բացառում: Կախված այս կամ այն երկրի մշակույթից՝ էթիկան և գործարար էթիկան կարող են ունենալ որոշ տարբերություններ, առանձնահատկություններ:

Սակայն, ցանկացած երկրում այս ոլորտում առանձնացվում են աստիճանակարգային 3 հիմնական մակարդակ: Ժամանակակից բիզնեսի պրոֆեսիոնալ էթիկան ներառում է. համամարդկային արժեքներ, որոնք կարգավորում են բիզնեսի սոցիալական պատասխանատվությունը.

- աշխատատեղերի ստեղծում,
- այս կամ այն ապրանքատեսակների արտադրություն,
- աշխատողների նկատմամբ հոգատարություն և այլն:

Էթիկական բանաձևերի կիրառման սկզբունքները, բացի բազմակողմանի կիրառություն ունեցող «քաղաքավարություն» սկզբունքից, խոսքի՝ իրավիճակին համապատասխանության սկզբունքներն են:

Էթիկական բանաձևը, որպես խոսքի արտահայտման միջոց, հաճախ ենթադրում է արդեն ձևակերպված առաջարկ: Դրանցից շատերը ներառում են արդեն հնացած, ինքնուրույն չկիրառվող բառեր: Կան արտահայտություններ, որոնք շատ տարածված են ժամանակակից խոսակցական լեզվում, սակայն եթե փորձենք վերլուծել այդ արտահայտությունների առանձին բառերը, դրանցից շատերը ինքուրույն կիրառությունից դուրս են եկել:

Արտահայտությունների միջոցով մենք արտահայտում ենք մեր վերաբերմունքը հանդիպման և հրաժեշտի ժամանակ, երբ որևէ

մեկին շնորհակալություն ենք հայտնում կամ ներողություն ենք խնդրում, ծանոթության և շատ այլ դեպքերում: Դրանց կիրառության սահմանները այսօր ևս չափազանց մեծ են:

Էթիկական բանաձևերի կիրառման սկզբունքները, բացի բազմակողմանի կիրառություն ունեցող «քաղաքավարություն» սկզբունքից, դրանք խոսքի՝ իրավիճակին համապատասխանության սկզբունքներն են: Շփման տեսակը (պաշտոնական/ոչ պաշտոնական) և հասցեատիրոջ գործոնը (հասարակական դիրքը, անձնական արժանիքները, տարիք/սեռ, ճանաչողության մակարդակը) էթիկական բանաձևի ընտրության որոշիչ գործոններն են հանդիսանում.

Ողջույնի խոսք	Բարի օր (առավոտ, երեկո) Բարև Ձեզ
Հրաժեշտի բանաձևեր	Ցտեսություն Ամենայն բարիք Մինչ նոր հանդիպում (եթե այն նշանակվել է) Թույլ տվեք գնալ Բարի ճանապարհ (մեկնողին)
Շնորհակալական բանաձևեր	Շնորհակալություն: Ես ձեզ պարտական եմ Շնորհակալ եմ Սրտանց շնորհակալ եմ Թույլ տվեք շնորհակալություն հայտնել ձեզ

Խնդրանք	Բարի եղեք … Խնդրում եմ …
Ներողություն	Հայցում եմ ձեր ներողամտությունը … Ներեցեք, խնդրեմ … Խնդրում եմ ներեք ինձ … Ներեցեք …
Առաջարկություն	Թույլ տվեք առաջարկել … Ուզում եմ առաջարկել … Կցանկանայի առաջարկել ձեզ …
Հրավեր	Թույլ տվեք հրավիրել ձեզ … Ես հրավիրում եմ ձեզ … … անունից հրավիրում եմ ձեզ …

Բիզնեսի աշխարհում և քաղաքական կյանքում գործարար զրույցը զրուցակիցների միջև բանավոր պայմանագրի դեր է կատարում: Դրանց հիմնական նպատակն է.

- նորանոր հեռանկարային միջոցառումների ձեռնարկումը,
- կողմերի միջև ինֆորմացիայի փոխանակումը,
- ընթացիկ միջոցառումների վերահսկումը,
- միևնույն գործարար ոլորտի աշխատակիցների շփումը:

Գործարար զրույցն ունի հետևյալ կառուցվածքը.

1. Նախապատրաստում գործարար զրույցին,

2. Հանդիպման վայրի և ժամանակի ճշտում,

3. Զրույցի սկիզբ (շփման մեջ մտնելը),

4. Խնդրի առաջադրում և ինֆորմացիայի փոխանակում,

5. Փաստարկումներ,

6. Զրուցակցի փաստարկների հերքում,

7. Արդյունավետ կամ փոխզիջումային տարբերակների որոնում,

8. Որոշման ընդունում,

9. Պայմանավորվածության արձանագրում,

10. Զրույցի ավարտ:

11. Զրույցի արդյունքների և սեփական ռազմավարության վերլուծություն:

Համառոտ կերպով քննարկենք վերոհիշյալ փուլերը:

Գործարար վարվեցողությունը սահմանվում է պաշտոնական հանդիպումների և ընդունելությունների կազմակերպման, գործարար զրույցի, բանակցությունների անցկացման և համաձայնագրերի ստորագրման կարգը: Այն սահմանում է օտարերկրյա պետությունների և կառավարությունների, արտաքին հարաբերությունների գերատեսչությունների, միջազգային կազմակերպությունների ղեկավարների, վերջիններիս բարձր մակարդակի առաքելությունների, դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների պաշտոնական պատվիրականությունների, հատուկ դիվանագիտական առաքելությունների, դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների և նրանց ուղեկցող անձանց այցերի նախապատրաստումն ու իրականացումը:

Գործարար բանակցություն վարելու կարողությունը գործարար շփումներում հաջողության հասնելու հիմնական պայմաններից է: Գործարար շփման հաջողությունը կախված է զրուցակիցների վարքագծային սկզբունքներից, այդ

թվում՝ խոսակցական շփման: Ցակացած գործնական իրավիճակներում կարող են հայտնվել հաղորդակցման տարբեր մոտեցումներ ունեցող մարդիկ.

- **Բաց** (մարդկանց այս տեսակը համարվում է շփման համար ամենահարմարը),
- **Փակ** (մարդ-արտիստ):

Առաջին տեսակը հաղորդակցման ժամանակ իր ողջ ուշադրությունը կենտրոնացնում է զրուցակցի վրա, իսկ երկրորդը՝ ինքն իր:

Գործնական փոխհարաբերություններում բոլոր խոսակցությունները միտված են զրուցակցի որոշակի պատասխան ռեակցիային:

Որպեսզի արձագանքը ադեկվատ լինի, երկու կողմերի համար պարտադիր է.

- Տիրապետել գործարարին բնորոշ անձնային հատկանիշների. լինել ինքնավստահ, ունենալ անձնական նպատակներ և արժեքներ, տիրապետել շփման առարկային, լինել տեղեկացված և կոմպետենտ, օբյեկտիվություն ցուցաբերել տեղեկատվության գնահատման և դրա հաղորդման եղանակների նկատմամբ, ցուցաբերել անկեղծ հետաքրքրություն զրույցի թեմայի և զրուցակցի նկատմամբ:
- Գործարար շփման ժամանակ հարգել զրուցակցի անհատականությունը, փորձել նրա աչքերով տեսնել խնդիրը, հարգալից լինել նրա դատողությունների և հակադրությունների նկատմամբ:
- Հետևել «համապատասխանություն» կարգախոսին (անգլերեն relevant-տեղին, գործին վերաբերվող) – խոսել քննարկվող թեմայի շուրջ, գործարար շփման ժամանակ զրուցակցին հետաքրքրող տեղեկատվություն տալ:
- Ճիշտ վերաբերվել տեղեկատվության քանակին և որակին, արժանահավատությանը, որևէ բան ասելիս լինել հետևողական և հիմնավորված:
- Հետևել գործնական խոսքի լեզվական չափանիշներին, հստակ ձևակերպել միտքը, օգտագործել գործարար շփման ժամանակ կիրառելի և ընդունված արտահայտություններ, խուսափել սխալ ձևակերպված մտքերից (խոսքերի անհամապատասխանություն և բանավոր ազդանշաններ, որոնք չեն ընկալվում զրուցակցի կողմից):

- Ենթարկվել սահմանված կանոններին և սահմանափակումներին (հռչակագրերին, գործարար էթիկային, շփման մշակույթին, որոնք հնարավորություն են տալիս զրուցակցի մոտ լավ տպավորություն թողնել):

Վարվեցողությունը ծառայողական ոլորտում

- Աշխատավայրում ծառայողական փոխհարաբերություններում գործում են քաղաքավարության այն բոլոր կանոնները, որոնք անհրաժեշտ է պահպանել հասարակական վայրերում և զանազան կենցաղային իրավիճակներում:
- Աշխատավայրում պետք է ունենալ հանգիստ հավասարակշիռ պահվածք, խուսափել այն ամենից, ինչը կարող է անհանգստացնել գործընկերներին: Վայելուչ չէ գոռալ, սուլել, աղմկել, դռներն աղմուկով ծածկել, կռվել, երկիմաստ և գռեհիկ արտահայտություններ անել:
- Յուրաքանչյուր աշխատողի պարտքն է հետևել իր աշխատասեղանի մաքրությանը և կարգ ու կանոնին: Սուրճի և թեյի բաժակները, թխվածքը, պայուսակը, դիմահարդարման միջոցները հարկավոր է դարակում աննակատ պահել, ոչ թե դնել աշխատասեղանին՝ պաշտոնական փաստաթղթերի հետ միասին:
- Աշխատավայրում պատշաճ չէ նաև ոչ աշխատանքային գործերով զբաղվելը:
- Այցելուները հիմնարկի աշխատողից ակնկալում են գործնականություն, սիրալիրություն, օգնելու պատրաստակամություն, արագաշարժություն:
- Պատրաստակամ աշխատողը սիրալիր հարցուփորձ է անում այցելուին, պարզում նրա նպատակը և համապատասխան օգնություն ցույց տալիս: Եթե նրան դիմում է այնպիսի այցելու, որը վատ է լսում կամ անկարող է արտահայտել իր մտքերը, աշխատողը չպետք է կոպտի նրան, այլ փորձի հասկանալ և օգնել:
- Վարվեցողության վերը նշված կանոնները վերբերում էին հիմնարկի աշխատողներին, սակայն հիմնարկների հետ առնչվելիս այցելուները նույնպես պետք է պահպանեն որոշակի նորմեր: Այցելուն իր հերթին հիմնարկի աշխատողի հետ պետք է լինի սիրալիր ու քաղաքավարի և իր ասելիքը, միտքը շարադրի պարզ և հստակ:

- Հիմնարկի մուտքի դուռը չի կարելի շխկացնել: Աշխատասենյակ մտնելուց առաջ հարկ է դուռը թակել, իսկ ներս մտնելիս՝ բարևել: Եթե այցելուն տեսնում է, որ աշխատողը դրամ է հաշվում, գրում է կամ համաշիվ է անում, պետք է սպասի, մինչև նա ավարտի և հետո միայն դիմի նրան: Հարկ է միշտ գործածել քաղաքավարության տարրական արտահայտությունները՝ «Շնորհակալություն», «Խնդրեմ», և այլն:

2.1 Գործարար արարողակարգի առանձնահատկությունները տարբեր երկրներում

ԱՆԳԼԻԱ

- ***Ողջույնի ձևը:*** Ձեռքսեղմումը՝ միայն ծանոթության ժամանակ և երկարատև բաժանումից հետո: Գրկախառնությունները հազվադեպ են:
- ***Դիմելաձևը:*** Բարձրաստիճան անձանց և պալատականների հետ հաղորդակվելիս հարկավոր է տիտղոսները ճիշտ գործածել:
- ***Հագուստը:*** Պահպանողական է: Անհրաժեշտ է ուշադրություններ դարձնել ընդունելությունների համար ուղարկվող հրավիրատոմսերում նշված հագուստի պահաջներին: Եկեղեցի այցելելիս ընդունված է պաշտոնական հագուստը:
- ***Ծաղիկները և նվերները:*** Որպես նվեր շատ ընդունված են ծաղիկները: Հրավերքից հետո տանտիրուհուն անպայման անհրաժեշտ է գրավոր շնորհակալություն հայտնել: Ընկերական հավաքների ժամանակ կարելի է խմիչք տանել:
- ***Ճշտապահությունը:*** Միշտ և ամենուր:
- ***Թեյանվերն*** ընդունված է:
- ***Յուրահատկությունները***: Պետք է խոսել ոչ թե բրիտանացիների, այլ անգլիացիների և Ուելսի բնակիչների մասին: Համառությունն անքաղաքավարի է համարվում:

ԹՈՒՐՔԻԱ

- ***Ողջույնի ձևը:*** Ընդունված է ձեռքսեղմումը:
- ***Դիմելաձևը:*** «Բայան» (կին) կամ «Խանըմ» (կին) և «Բայ» (պարոն) բառերն ասում են ազգանունից հետո:

- ***Հագուստը:*** Կանանց խորհուրդ չի տրվում կրել թեթևամիտ, անպարկեշտ հագուստ (թափանցիկ կտորից կարված կամ լայն բացվածք ունեցող զգեստներ, կարճ կիսաշրջազգեստ, նեղ տաբատ և այլն): Տղամարդկանց նույնպես ընդունված չէ կարճ տաբատ հագնել:
- ***Ճաղիկները և նվերները:*** Որպես նվեր՝ ընդունված են ծաղիկները կամ կենցաղային ոչ թանկարժեք իրերը: Չպետք է զարմանալ կամ հիանալ տան թանկարժեք իրերով կամ զարդերով. այդպիսի վարմունքը տանտիրոջը պարտավորեցնում է նվիրել դրանք:
- ***Ճշտապահությունը:*** Թույլատրվում է 15 րոպե ուշացում:
- ***Թեյանվերը*** տալիս են առատաձեռնորեն, ամենուր այն հաճույքով ընդունվում է:
- ***Յուրահատկությունները:*** Խիստ զսպվածություն պետք է ցուցաբերել լուսանկարելիս, հատկապես երկրի արևելյան հատվածի քիչ բնակեցված շրջաններում. լուսանկարելը, ըստ մուսուլմանների, վիրավորում է մարդու արժանապատվությունը: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ուտելու, խմելու և ծխելու, ինչպես նաև մզկիթները դիտելու իսլամական ավանդույթներին: Տղամարդիկ և կանայք հասարակական վայրերում միմնյանց հանդեպ ուշադրություն չեն արտահայտում: Անքաղաքավարի է համարվում առաջարկը հետաձգելը: Ընդուված է հյուրին հրաժեշտի նվեր հանձնելը (չի կարելի դրամական նվեր տալ):

ԻՍՊԱՆԻԱ

- ***Ողջույնի ձևը:*** Ընդունված է ձեռքսեղմումը, ծանոթների համար՝ գրկախառնվելը: Մտերիմ տղամարդիկ հաճախ բարևում են մեկը մյուսին մեջքին թփթփացնելով:
- ***Դիմելաձևը:*** Ընդունված են «սենյոր» (տղամարդկանց) «սենյորա» (կանանց) և «սենյորիտա» (աղջիկներին) դիմելաձևերը:
- ***Հագուստը:*** Եկեղեցի գնալու համար չափազանց կարևոր է համապատասխան հագուստ կրել:
- ***Ճաղիկները և նվերները:*** Որպես նվեր՝ ընդունված են ծաղիկները, գինին և շոկոլադը: Կարմիր վարդերն այստեղ միայն սիրո նշան չեն, դրանք կարելի է նվիրել միայն տանտիրուհուն: Չեն նվիրում քրիզանթեմ (դա գերեզմանի ծաղիկ է համարվում):

- ***Ճշտապահությունը:*** Թույլատրվում է ուշանալ 15-30 րոպե հարավային շրջանում՝ նույնիսկ մեկ ժամ:
- ***Թեյանվերն*** ընդունված է. ամեացածրը ՝ 10%:
- ***Յուրահատկությունները:*** Ցլամարտի ժամանակ ոչ մի դիտողություն չանել:

ԻՏԱԼԻԱ

- ***Ողջույնի ձևը:*** Ընդունված է ձեռքսեղմումը, հաճախ նաև գրկախառնվելը:
- ***Դիմելաձևը:*** «Դոկտոր» կամ «պրոֆեսոր» կոչումներն ուղղված են բարձրագույն կրթություն ունեցողներին:
- ***Հագուստը:*** Եկեղեցի այցելելիս շատ կարևոր է համապատասխան հագուստ կրել:
- ***Ծաղիկները և նվերները:*** Ընդունված են, բայց ոչ տղամարդկանց համար: Քրիզանթեմ չեն նվիրում (դա ինչպես Իսպանիայում, գերեզմանի ծաղիկ է համարվում):
- ***Ճշտապահությունը:*** Թույլատրվում է 15 րոպե ուշացում:
- ***Թեյանվերը:*** Առավել առատաձեռն են, քան Իսպանիայում:
- ***Յուրահատկությունները :*** Խորհուրդ չի տրվում իտալացիների հետ խոսել մաֆիայի մասին:

ՆՈՐՎԵԳԻԱ

- ***Ողջույնի ձևը:*** Ձեռքսեղմումն ընդունված է միայն առաջին հանդիպման ժամանակ կամ երկարատև բացակայության դեպքում:
- ***Դիմելաձևը:*** Հիմնականում իրար դիմում են անուններով: Դիմելիս սովորաբար ազգանունը չի օգտագործվում: Բավականին շուտ է անցնում «դու»-ի:
- ***Հագուստը:*** Եկեղեցիներ այցելելիս թույլատրվում է ազատ ոճը:
- ***Ծաղիկները և նվերները:*** Ընդունված են փոքրիկ նվերները:
- ***Ճշտապահությունը:*** Ճշտապահությունը քաղաքավարություն է համարվում: Մասնավոր հանդիպումների ժամանակ 10 րոպե ուշացումները թույլատրելի են:
- ***Թեյանվերի*** չեն սպասում և հիմնականում չեն վերցնում:

- ***Յուրահատկությունները:*** Վերաբերմունքը բնությամբ նկատմամբ՝ ինչպես Շվեդիայում: Բաժակները շրխկացնել ընդունված է: Հատկապես վարչական շենքերում և կայարաններում ծխելը խստիվ արգելվում է:

ՇՎԵԴԻԱ

- ***Ողջույնի ձևը:*** Ձեռքսեղմումը տարածված չէ:
- ***Դիմելաձևը:*** Հիմնականում միմյանց դիմում են անուններով: Դիմելիս սովորաբար ազգանունը չի գործածվում: Բավականին շուտ են անցնում «դու»-ի:
- Հագուստը: Եկեղեցի այցելելիս, ինչպես Նորվերգիայում, թույլատրվում է ազատ ոճը:
- ***Ճաղիկները և նվերները:*** Շվեդիայում չեն սիրում մեխակներ:
- ***Ճշտապահությունը:*** Ճշտապահությունը քաղաքավարություն է համարվում: Մասնավոր հանդիպումների ժամանակ 10 րոպե ուշացումները թույլատրելի են:
- ***Թեյանվերը*** քիչ է տարածված:
- ***Յուրահատկությունները:*** Շվեդիայում չափազանց խիստ են վերաբերվում բնության պահպանության հարցերին: Ձկնորսությունը, վրաններով հանգստանալը թույլատրվում է, սակայն հաշվի առնելով շրջապատող միջավայրի բնությունը:
  Ուտելուց հետո հարկ է տանտիրուհուն շնորհակալություն հայտնել:

ՖԻՆԼԱԴԻԱ

- ***Ողջույնի ձևը:*** Ձեռքսեղմումն ընդունված է միայն առաջին հանդիպման ժամանակ կամ երկարատև բացակայության դեպքում:
- ***Դիմելաձևը՝*** մեծամասամբ միայն «Բարև», «Բարի օր», «Բարի երեկո» ՝ առանց ազգանունը ասելու:
- ***Հագուստը:*** Ընդունված է դասական և ազատ ոճի հագուստը:
- ***Ճաղիկները և նվերները:*** Ճաղիկները ընդունված են: Սպիտակ շուշանները գերեզմանի ծաղիկներ են համարվում:
- ***Ճշտապահությունը:*** Ճշտապահությունը քաղաքավարություն է համարվում: Մասնավոր հանդիպումների ժամանակ 10 րոպե ուշացումները թույլատրելի են:

- ***Թեյանվերն*** ընդունված է:
- ***Յուրահատկությունները:*** Այս երկրում շատ են սիրում բնությունը և չափազանց խիստ են բնության պահպանության հարցերում: Ձկնորսությունը կարելի է միայն հատուկ թույլատվությամբ:

ՖՐԱՆՍԻԱ

- ***Ողջույնի ձևը:*** Ընդունված է ձեռքսեղմումը, ինչպես նաև այտը համբուրելը:
- ***Դիմելաձևը:*** Եթե ազգանունը չեն իմանում, ասում են մադմուազել (աղջիկներին), մադամ (կանանց), կամ մըսյե (տղամարդկանց):
- ***Հագուստը:*** Եկեղեցի այցելելիս համապատասխան հագուստ է պահանջվում:
- ***Ծաղիկները և նվերները:*** Ծաղիկները նախօրոք են ուղարկում: Քրիզանթեմ չեն նվիրում՝ համարելով գերեզմանի ծաղիկ:
- ***Ճշտապահությունը:*** Թույլատրվում է 15 րոպե ուշացում:
- ***Թեյանվերն ընդունվում է:*** Կինոյում և թատրոնում թեյանվեր տալիս են հանդիսասրահում տեղերը ցույց տվողներին: [8]

2.2 Գործարար և պաշտոնական այցեր, ընդունելություններ

Գործարար այցը կատարվում է երկրի ղեկավարի, կառավարության անդամների, նախարարների կամ այլ պատվիրակությունների կողմից, որի նպատակն է մասնակցել տարբեր միջազգային ժողովներին ու գիտաժողովներին, ինպես նաև նախօրոք ձեռք բերված պայմանագրերի և այլ փաստաթղթերի ստորագրմանը:

Պաշտոնական այցերը բնորոշվում են քաղաքական նշանակալիությամբ և հանդիսավորությամբ:

---

8 https://docviewer.yandex.ru/view/109911353/?page=14&*=HOY8%2B9qq1tNNCFI%2FXS8ew4dzJEF7InVybCI6InlhLW1haWw6Ly8xNjg4ODQ5ODYwMjY0MjA4MTUvMS4yIiwidGl0bGUiOiJkNWEzZDViOGQ2ODBkNWFlZDVhMWQ2ODBkNWExZDY4MC1kNWE3ZDVhOWQ1YWJkNWFmZDVhMS1kNjg3LWQ1YTdkNWE5ZDVhYmQ1YWZkNWE1ZDViZjEucHB0eCIsIm5vaWZyYW1lIjpmYWxzZSwidWlkIjoiMTA5OTExMzUzIiwidHMiOjE1NTg0MTM4NTAyNDYsInl1IjoiNTYzNzg1NjY1MTU0NDk2Njg0NSJ9

Պաշտոնական այցի նպատակը քաղաքական բանակցությունների անցկացումն է, որն հաճախ ավարտվում է որևէ քաղաքական համաձայնագրի ստորագրմամբ:

Հանդիպմանը ներկա է լինում երկրի նախագահը, հյուրընկալվող երկրի դեսպանը, դեսպանատան կազմը, պաշտոնատար այլ անձինք: Հանդիպմանը մասնակցում են նաև տեղացի և արտասահմանցի լրագրողներ:

Փոխադարձ ողջույնից հետո պատվավոր հյուրը և ընդունող կողմի ղեկավարը մոտենում են պատվո պահակախմբին: Նվագախումբը նվագում է ընդունելության երթ, որից հետո հնչում են հյուրընկալող և հյուրընկալվող երկրների օրհներգերը: Պատվո պահակախմբի շրջայցից հետո պատվավոր հյուրին ներկայացնում են դիմավորող պատվիրականության կազմի անդամներին:

Պաշտոնական ընդունելությունների արարողակարգին շրագրում ամենակարևորը գործարար մասն է, որը ներառում է գործարար հանդիպումների և բանակցությունների անցկացումը , համաձայնագրերի և այլ պաշտոնական փաստաթղթերի ստորագրումը, ինչպես նաև մամլո ասուլիսների, համատեղ գիտաժողովների, հեռուստատեսային ելույթների անցկացումը: Երբեմն պաշտոնական այցի ժամանակ պատվավոր հյուրին հանձնվում են ազգային պարգևներ:

Պատվիրականության ընդունելության արարողակարգային ծրագրի մեջ մտնում են նաև այցելություններ դեպի ազգային սրբավայրեր և հուշարձաններ:

Պաշտոնական այցերի մի մասն է կազմում ներկայացուցչական միձոցառումները՝ պաշտոնական նախաճաշը, ճաշը և այլն: Պաշտոնական ճաշի ժամանակ կողմերը փոխանակվում են խոսք-կենացներով, որոնց թարգմանված տեքստերը նախապես դրվում են սեղանների վրա:

Պաշտոնական արարողակարգի գործողություններից է նար ճամփորդությունը երկրի տարացքում: Ճամփորդության ժամանակ հյուրին ուղեկցում են բարձր մակարդակի պաշտոնատար անձինք:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդունելությունները պաշտոնական միջոցառումներ են, որոնք կազմակերպվում են ազգային տոների, պատմական հոբելյանների

կապակցությամբ, ինչպես նաև տարբեր երկրների ղեկավարների և օտարերկրյա պատվիրականության պատվին: Պաշտոնական ընդունելությունները կազմակերպվում են դիվանագիտական արարողակարգի նորմերով: Դիվանագիտական ընդունելություններն ունեն քաղաքական բնույթ. դրանց նպատակն է երկրների միջև նոր դիվանագիտական կապերի ստեղծումը, ամրապնդումը, անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումը և հետագա համագործակության ամրապնդումը:

Ընդունելությունների տեսակը

Ընդունելությունները լինում են ցերեկային և երեկոյան: Դիվանագիտական արարողակարգի համաձայն՝ երեկոյան ընդունելություններն ավելի հանդիսավոր են, քան ցերեկայինները: Ցերեկային ընդունելություններն են մի գավաթ գինին և նախաճաշը: Երեկոյան ընդունելությունների մեջ մտնում են կոկտեյլը, «ա լա ֆուրշեթը», ճաշը, ճաշ-բուֆետը, ընթրիքը, սուրճի կամ թեյի սեղանը:

Մի գավաթ գինի կամ շամպայն

Այս ընդունելությունները սովորաբար սկսվում են ժամը 12:00-ին և ավարտվում են 13:00-ին: Այն կազմակերպվում է ազգային տոների, ցուցահանդեսների, փառատոների, դեսպաններին լիազորագրերի հանձնման կապակցությամբ: Որպես կանոն՝ մատուցվում են միայն շամպայն, գինի և հյութեր, ինչպես նաև չի բացառվում վիսկին և օղին: Նախաճաշը պարտադիր չէ, փոխարենը մատուցվում են քաղցրավենիք, բուտեբրոդներ և ընկուզեղեն:
Ընդունելությունների ժամանակ սեղան չեն նստում:
Հագուստը՝ ամենօրյա կոստյում կամ զգեստ:

Կոկտեյլ

Կոկտեյլը կարճատև և անկաշկանդ ընդունելության ձև է, որն սկսվում է ժամը 17:00-18:00-ի սահմաններում և տևում մոտավորապես երկու ժամ: Հրավիրատոմսի կամ հյուրասենյակում: Քանի դեռ բոլոր հյուրերը չեն հավաքվել, նախքան նախաճաշը ներկա հյուրերին կարելի է առաջարկել օղի, վիսկի, գինի կամ հյութ:

Վրա ընդունված է նշել կոկտեյլի սկսվելու և ավարտվելու ժամերը: Սովորաբար կոկտեյլին մասնակցում են մեկուկես ժամից ոչ ավելի:
Կոկտեյլի սեղանին հատուկ սպասք չի դրվում, դրվում են միայն փայտե կամ

պլասմասե ձողիկներ, իսկ երբեմն էլ դրանց փոխարեն գործածվում են փոքրիկ պատառաքաղներ, որոնց օգնությամբ ուտում են կոկտեյլի մրգերը, փոքրիկ բուտեբրոդները: Իսկ հագուստը՝ ամենօրյա կոստյում կամ զգեստ:

«Ա լա ֆուրշեթ»

Ընդունելության այս տեսակը նույնպես անցկացվում է ժամը 17:00-20:00-ը և տևում է երկու ժամ: Սեղանների վրա անպայման սփռոցներ են զցվում: Քանի որ ընդունելությունն անցկացվում է կանգնած, այդ պատճառով սեղաններն մի փոքր բարձր են: Եթե ընդունելությունը նախատեսված է փոքրաթիվ մարդկանց համար, ապա մեկ սեղան է զցվում: Եթե հյուրերը շատ են և տարածությունը՝ մեծ, կարելի է մի քանի սեղան զցել, յուրաքանչյուրը՝ 6-8 հոգու համար:
«Ա լա ֆուրշեթի» ընթացքում նախ մատուցվում են սառը նախաճաշիկները, այնուհետև՝ տաք կերակուրը: Տաք կերակուրներից հետո մատուցվում են աղանդներ՝ մրգեր, դոնդող, պաղպաղակ, իսկ ընդունելության վերջում ՝ սուրճ և շամպայն:
Այսպիսի ընդունելությունների ժամանակ հյուրերն իրենք են իրենց սպասարկում և օգտվում սեղանից, իսկ մատուցողները միայն փոխում են ափսեները և թարմացնում նախաճաշիկները: Հագուստը ամենօրյա կոստյում կամ զգեստ:

Ճաշ

Ճաշը ընդունելության ամենապատվավոր և ամենահանդիսավոր ընդունելության տեսակն է: Այն սովորաբար սկսվում է 19:30-21:00-ի սահմաններում:
Սկզբում մոտեցվում են սառը նախաճաշիկներ՝ մեկ սառը մսեղեն և մեկ սառը ձկնեղեն, բանջարեղենից պատրաստված սալաթների հետ միասին, այնուհետև՝ արգանակ՝ բոված հացի կտորներով, որից հետո՝ տաք ճաշատեսակ՝ ձուկ կամ միս: Ավելի ուշ փոխվում է սպասքը և մատուցվում են աղանդերներ՝ դոնդող, թխվածք, մրգեր և այլ քաղցր կերակրատեսակներ:
Աղանդերից մատուցվում է սուրճ կամ թեյ:
Հագուստը պետք է լինի տոնական: Եթե հրավիրատոմսի ներքևի ձախ անկյունում գրված են «White tie» (սպիտակ փողկապ) բառերը, ապա նշանակում է, որ ընդունելության պետք է գնալ ֆրակով, եթե «Black tie» (սև փողկապ), ապա՝ սմոքինգով: «Evening dress» (երեկոյան զգեստ) արտահայտությունը նույնպես

նշանակում է հանիսության գնալ ֆրակով: Կանայք այդպիսի ընդունելության պետք է գնան երեկոյան զգեստով: Նրանք կարող են չհանել գլխարկները, սակայն ձեռնոցները պետք է հանել նախքան սեղան նստելը:
Եթե հրավերի մեջ ոչինչ չի ասվում, ապա տղամարդիկ կարող են ներկայանալ դասական մուգ գույնի հագուստով:

Ճաշ-բուֆետ

Ընդունելության այս տեսակը անվանում են նաև Ծվեդական սեղան, քանի որ այն ծագել է Ծվեդիայում:
Ճաշ-բուֆետը սովորական ճաշից տարբերվում է նրանով, որ դրա ժամանակ հյուրերին նստեցնում են 5-6 հոգու համար նախատեսված առանձին սեղանների շուրջ, իսկ հյուրասիրությունը ինքնասպասարկման սկզբունքով է. հյուրերն իրենք են օգտվում սեղանների վրա դրված ուտեստներից:
Այն սովորաբար տևում է 19:30-21:00-ն: Սեղանի մեջտեղում դրվում են սառը խորտիկներ, հաց, աղանդեր, թխվածքաբլիթ, սառը խմիչքներ, հյութեր և հանքային ջուր:
Այսպիսի ընդունելությունը կազմակերպվում է համերգից, կինոֆիլմի ցուցադրումից հետո: Տաք երկրներում ճաշ-բուֆետը անցկացվում է բացօթյա:
Հագուստը՝ ամենօրյա կոստյում կամ զգեստ:

Ընթրիք

Այս ընդունելությունը սկսվում է ժամը 21:00-ից հետո: Ընտրիքը ճաշից տարբերվում է նրանով, որ ավելի ուշ է սկսվում և ընթացքում ապուր չի մատուցվում: Տաք ընթրիք մատուցվում է առաջին հյուրերի գալուց կես ժամ անց կամ փոքր-ինչ ուշ:
Հագուստի տեսակը շեշտվում է հրավերի մեջ: Տղամարդիկ այսպիսի Այս ընդունելությանը հագնում են ֆրակ, սմոքինգ կամ խիստ դասական կոստյում, կանայք՝ երեկոյան զգեստ:

Թեյի սեղան

Սկսվում է 17:00-ից մինչև 20:00-ի սահմաններում և տևում է միջին հաշվով մեկից մեկ ու կես ժամ: Եթե հրավիրվածները շատ են բացվում է մի քանի սեղան: Այսպիսի ընդունելության ընթացքում հյուրերին մատուցում են փոքրիկ, գեղեցիկ

ձևավորված բուտեբրոդներ, քաղցրավենիք, տորթեր, տարբեր տեսակի թխվածքներ, շոկոլադ, պաղպաղակ, կիտրոն: Թեյնիկը դրվում է սեղանին: Հագուստի տեսակը՝ ամենօրյա կոստյում կամ զգեստ:

Սուրճի սեղան

Այս ընդունելությունը սկսվում է 19:00-ից ոչ ուշ: Մատուցվում է տաք նախաճաշիկ կամ աղցան: Աղցանը ընդունված է հրամցնել գավաթներով կամ բարձր ապակե ամաններով: Մատուցվում է նաև հյութ կամ հանքային ջուր:
Հագուստի տեսակը ՝ ամենօրյա կոստյում կամ զգեստ:

Ընդունելությունների կազմակերպումը

Ընդունելությունների կազմակերպումը ներառում է.

1. ընդունելության տեսակի ընտրությունը,
2. հրավիրվող անձանց ցուցակագրումը,
3. հրավիրատոմսերի կազմումը և ուղարկումը,
4. հյուրերին սեղանի շուրջ տեղավորելու նախագծի կազմումը,
5. ճաշացանկի ընտրությունը,
6. սեղանի ձևավորումը,
7. կենացների և բաժակաճառերի նախապատրաստումը (հանդիսավոր ընդունելությունների դեպքում),
8. ընդունելության անցկացման կարգի հստակեցումը: [9]

[9] https://docviewer.yandex.ru/view/109911353/?*=GPHFih%2FjQxz%2FI%2FXvzdtFhLkMTqx7InVybCI6InlhLW1haWw6Ly8xNjg4ODQ5ODYwMjY0MjA4MDUvMS4yIiwidGl0bGUiOiLVitWh1bXVrtWh1bwtYWxsLnB

ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ

Գրքույկը կօգնի հասկանալ գործարար էթիկայում տարբեր մշակույթների ողջունման կարգերը:

Ստորև ներկայացված են մի քանի երկրների ողջունման մշակույթային առանձնահատկությունները.

Ճապոնիայում ողջունման ձևը միմյանց առջև խոնարհվելն է, ըստ նրանց պատկերացման խոնարհումը պատվի և հարգանքի նշան է:
Ռուսաստանում ընդունված տարբերակն է ամուր ձեռքսեղմումը, որի ընթացքում մարդիկ իրենց անմիջականությունն են ցույց տալիս :

Նոր Զելանդիայի հոնգի բնակիչների մոտ ողջունման կարգը այլ է. նրանք միմյանց բարևում են ճակատը ճակատին, քիթը քթին ձևով:

Թաիլանդում բարևում են ձեռքի ափերը միասին սեղմածկրծքավանդակին խոնարհումը ամենատարածված ձևերից է:

Հնդկաստանում բարևում են ձեռքեռի ափերը միասին, աղոթելու նման պահված և մի փոքր խոնարհված ասում են. «նամաստե»:

Ֆիլիպիններում որպես հարգանքի և ողջույնի նշան համբուրում են մեծահասակների ձեռքը :

Երբ խոսքը գնում է գործարար էթիկայի մասին, պետք է հաշվի առտնել տվյալ մարդկանց միջմշակութային առանձնահատկությունները, որպեսզի գործնական աշխատանքները էլ ավելի հաջողվի:

Այսպես անհրաժեշտ է հաշվի առնել մի քանի կարևոր կետեր.

Ուշադրություն դարձնելը

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել խոսակցին, որպեսզի անտեսված չզգա դիմացինը:
Գործարար էթիկայի ողջունման ամենատարածված ձևերից է, ձեռքսեղման տարբերակը:

Գործարար էթիկայում ոչ պակաս կարևոր է ճիշտ հագուստի ոճի ընտրությունը:

Եթե դուք աշխատում եք պաշտոնական վայրում, ապա անհրաժեշտ է հաշվի առնել կոկիկ և պատասխանատու հագուստի պահանջը, քանի որ որոշ առումներով հագուստը ևս թողնում է բավականին լուրջ տպավորություն անձի և կազմակերպության մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով էթիկայի տեսությունը, հիմնվելով տարբեր երկրներում գործարար հարաբերությունների էթիկայի առանձնահատկությունների մասին տեղեկատվության վրա՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

- Ներանձնային հարաբերություններում և առհասարակ ժողովուրդների էթնոմշակութային առանձնահատկությունները միշտ էլ կարևոր դեր են խաղացել հանրության, ժողովրդի վարվեցողության նորմերի ձևավորման և կիրառման ձևերի վրա:
- Էթիկա եզրույթը բոլոր ժամանակներում ունեցել է տարբեր բնորոշումներ. ինքնատիրապետում, բարու և չարի գիտություն, իմաստություն, հանճար, ինքնահիրացում, չափավորություն, խելամտություն և այլն, բայց այն չի փոխել իր նշանակությունը:
- Էթիկա ու էթիկետ եզրույթները նույն իմաստը չունեն. Էթիկան առավել ընդհանրական, փիլիսոփայական կատեգորիա է և չունի պարտադրող ուժ: Իսկ էթիկետը (վարվեցողություն) սահմանում է հստակ կանոններ յուրաքանչյուր իրավիճակի համար և ունի պարտադրող ուժ:
- Նորմատիվային էթիկան մարդու վարքագիծը կարգավորող, նրա արարքներն ուղղորդող, էթիկական բարության գնահատման չափանիշները հաստատող սկզբունքների որոնումն է: Իսկ վարվեցողությունը (էթիկետը) հասարակության կողմից սահմանված որոշակի կանոններ են, որոնք կարգավորում են մարդկային հարաբերությունների վարքային դրսևորումները:
- Էթիկան և էթիկետը կարևոր տեղ են գրավում գործարար ոլորտում: Բիզնեսի և գործարար հանդիպումների էթիկան կանոնների համախումբ է, որոնք հիմնված են մարդկային ավանդական արժեքների վրա և որոնց հետևում են կազմակերպության անդամներն ու գործընկեր կազմակերպությունները: Գործարար վարվեցողությունը վարվելակերպի կանոնակարգված նորմերի համակարգ է, որը կիրառվում է գործարար աշխարհում, գործարար շփումների ժամանակ: Գործարար արարողակարգը սահմանվում է պաշտոնական հանդիպումների և ընդունելությունների կազմակերպման,

գործարար զրույցի, բանակցությունների անցկացման և համաձայնագրերի ստորագրման կարգը:

- Գործարար բանակցություն վարելու կարողությունը գործարար շփումներում հաջողության հասնելու հիմնական պայմաններից է: Գործարար բանակցություններին նախապատրաստվելիս հարկ է հաշվի առնել որոշակի հանգամանքներ: Նախ և առաջ պետք է ճշտել բանակցությունների ժամանակ քննարկվելիք խնդրի էությունը, գործընկերոջ հուսալիությունը, տեղեկանալ նրա գործարար գործունեության մասին:
- Ցանկալի է հատուկ ուշադրություն դարձնել բանակցող կողմի պատվիրակության ղեկավարի աշխատանքային ինքնակեսագրությանը, իմանալ նրա նախասիրությունների մասին: Գործարար հանդիպումների և բանակցությունների հաջող ավարտը պայմանավորված է նաև կողմերի քաղաքակիրթ վարվելակերպով, այդ պատճառով գործարար ոլորտում վարվեցողության նորմերի իմացողությունը կարևոր նշանակություն ունի:
- Էթիկան և գործարար էթիկետը կարող են ունենալ որոշ տարբերություններ և առանձնահատկություններ կախված լեզվի մշակույթային տարբերությունից: Այսպես, ժամանակակից բիզնեսի պրոֆեսիոնալ էթիկան ներառում է այնպիսի համամարդկային արժեքներ, որոնք կարգավորում են բիզնեսի սոցիալական պատասխանատվությունը:
- Գործարար արարողակարգի առանձնահատկությունները տարբեր երկրներում որոշակի տարբերություններ ու յուրահատկություններ ունեն, որոնք պայմանավորված են տվյալ երկրների և ժողովուրդների էթնոմշակութային առանձնահատկություններով, սակայն ընդհանուր է մի բան. դրանք հիմնվում են այնպիսի բարոյական կատեգորիաների վրա, ինչպիսիք են քաղաքավարությունը, օրինավորությունը, զսպվածությունը և չափի զգացումը, որոնք ենթադրում են հաշվի առնել ոչ միայն ձեր բիզնես-շահերը, այլ նաև գործընկերների ազգային, մշակութային, սոցիալական և մարդկային առանձնահատկությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խաչատրյան Տ. «Հաղորդակցման և աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ», Երևան, 2012թ, էջ 17, 37
2. Berle, A. A., & Means, G. C. (1932). The Modern Corporation and Private Property.p 1
3. Bernard. Williams, Ethics and the Limits of Philosophy. p. 2
4. Cavalier Robert: «Meta-ethics, Normative Ethics, and Applied Ethics»: *Online Guide to Ethics and Moral Philosophy*:, 2014
5. Cook Martin L., Syse Henrik (2010): «What Should We Mean by 'Military Ethics'?»: p. 122
6. Are We Professionals? A Critical Look at the Social Role of Bioethicists". Daedalus. 1999. pp. 253–274.
7. John Deigh in Robert Audi (ed), The Cambridge Dictionary of Philosophy, 1995.
8. Jones C., Parker M. (2005): *For Business Ethics: A Critical Text*: London: Routledge, p. 17
9. Jones C., Parker M. (2005): For Business Ethics: A Critical Text: London: Routledge, p. 17
10. .Kidder, Rushworth (2003). How Good People Make Tough Choices: Resolving the Dilemmas of Ethical Living. New York: Harper Collins. p. 63
11. David Tanguay,"Buddha and Socrates share Common ground". 2014
12. Thompson, Dennis F. "Political Ethics". International Encyclopedia of Ethics, ed. Hugh LaFollette, 2012
13. Wallach Wendell, Allen Colin (November 2008): *Moral Machines: Teaching Robots Right from Wrong*: USA: Oxford University Press

Բառարանային աղբյուրներ

14. Definition of ethic by Merriam Webster". Merriam Webster. Retrieved October 4, 2015.

15. An Intermediate Greek-English Lexicon. 1889.

Էլեկտրոնային հղումներ

16. https://web.archive.org/web/20131028131348/http://www.bbc.co.uk/ethics/introduction/intro_1.shtml
17. http://www.iep.utm.edu/non-cogn/
18. https://onlinelibrary.wiley.com/doi/full/10.1111/j.1460-9592.2009.03086.x
19. https://journals.sagepub.com/doi/10.1177/1077800406294947
20. https://docviewer.yandex.ru/view/109911353/?page=14&*=HOY8%2B9qq1tNNCFI%2FXS8ew4dzJEF7InVybCI6InlhLW1haWw6Ly8xNjg4ODQ5ODYwMjY0MjA4MTUvMS4yIiwidGl0bGUiOiJkNWEzZDViOGQ2ODBkNWFlZDVhMWQ2ODBkNWExZDY4MC1kNWE3ZDVhOWQ1YWJkNWFmZDVhMS1kNjg3LWQ1YTdkNWE5ZDVhYmQ1YWZkNWE1ZDViZjEucHB0eCIsIm5vaWZyYW1lIjpmYWxzZSwidWlkIjoiMTA5OTExMzUzIiwidHMiOjE1NTg0MTM4NTAyNDYsInl1IjoiNTYzNzg1NjY1MTU0NDk2Njg0NSJ9
21. https://docviewer.yandex.ru/view/109911353/?*=GPHFih%2FjQxz%2FI%2FXvzdtFhLkMTqx7InVybCI6InlhLW1haWw6Ly8xNjg4ODQ5ODYwMjY0MjA4MDUvMS4yIiwidGl0bGUiOiLVitWh1bXVrtWh1bwtYWxsLnBk